

ՄԵՐ ԼՆՈՒԹԵՐՆԵՐԸ

Բ.

Այս վերնագիրը յօդուածով մը «Բանասէր»ի վերջին պրակին մէջ յայտնեցի թէ Վեհ. Կաթողիկոսի հրամանով ձեռնարկած եմ մեծ եւ շատ կարեւոր երկասիրութեան մը պատրաստութեան : Երկասիրութիւնս պիտի կրէ ՀԱՅԱՐՁԱՆ անունը եւ պիտի պարունակէ մեր բոլոր աւերակ եւ կանգուն յիշատակարաններու — վանքերու, բերդերու եւ ազգային ամէն տեսակ հնու թիւններու, գեղարուեստական ու մանաւանդ ճարտարապետական մնացորդներու, հին արձանագրութիւններու եւ ձեռագրաց— իսկասիպ պատկերները, հանդերձ մանրամասն տեղեկութիւններով, հնա- խօսական ու պատմական ծանօթութիւններով եւ արձանագրութեանց ստոյգ եւ անթերի հրատարակութեամբ : Գործը պատրաստելու համար պէտք էր որ ես անձամբ այցելէի ամէն տեղ : Եւ առաջին ուսումնական ուղեւորութիւնս կատարեցի մեծ արդիւնաւորութեամբ, որուն գլխաւոր ապացոյցն է «Բանասէր»ի ներկայ պրակին մէջ «Ձուարթնոց եկեղեցւոյ քեւեռածեւ արձանագրութիւն» վերնագրով գրած յօդուածս, զոր նախա- պէս Ֆրանսերէն լեզուով հրատարակած եմ այս La Stèle de Zouarthnotz տիտղոսով եւ առանձինն : Պէտք եմ աւելցնել նաեւ թէ գիտնական գոյն ունեցող եւ Եւրոպացիներն հետաքրքրող բոլոր ուսումնասիրութիւններս պիտի հրատարակեմ նաեւ Ֆրանսերէն լեզուով, ցոյց տալու համար Եւ- րոպայի թէ մենք իրօք փառաւոր անցեալ մը ունեցած ենք եւ թէ մեր մէջ կը գտնուին անձինք որոնք կարող են գիտնական հիմերու վրայ հաս- տատուած ուսումնասիրութիւններ կատարել նման եւրոպացի փոքրաթիւ գիտնականներու : Բայց, առանց հաշուելու տպագրական ծախքերը, այս կարգի ուսումնական ուղեւորութեան մը դրամ հարկաւոր է թէ՛ ճանա- պարհածախսի եւ թէ՛ ուրիշ յարակից պէտքերու համար : Ուստի «Բանա- սէր»ի նախորդ պրակին մէջ հանգանակութիւն մը բացած եւ 120 Ֆր. հաւաքած էի. այսօր ալ կը կցեմ Հանգանակութեան Երկրորդ Ցուցակը, հետեւեալ կերպով .

Նախորդ Ցուցակին համագումարը՝	Ֆր.	120, —
5. Հնասէր Ֆրանսուէի մը . . .	»	5, —
6. Մեծ. Դոկտ. Յ. Սըքըեան . . .	»	20, —
7. Հայ Վարդապետ մը . . .	»	20, —
8. Դոկտ. Վ. Յ. Թ. ու զաւակները	»	30, —
9. Յ. Սաղաթիէլ . . .	»	5, —
10. Տիգրան Գաբրիէլ (Ռումանիա)	»	20, —
Գումար		220, —

Հաւաքուած ու հաւաքուելի դրամներն անձեռնմխելի պիտի մնան մինչեւ իմ ուղեւորութեան տոմսակն ստանալու ժամը : Որպէս զի այս նպատակով հաւաքուած գումարը միմիայն ա՛յս դործին յատկացուի, ստացուած նուէրները կը պահուին Պարիսաքնակ պատուաւոր ազգային-ներէ մեծարգոյ Յ. Իսքէնաէրի քով, որու հասցէն է՝ Monsieur Isken-der, 36 rue de La Tour-d'Auvergne, Paris. Արդ՝ անոնք որ կը փա-փագին մասնակցիլ այստեսակ ազգային հանգանակութեան մը, կրնան դիմել նաեւ պր. Իսքէնաէրի հասցէին : Իրա՛ւ է, ինչպէս գիտել սուաւ յարգոյ պաշտօնակիցներէս մին, «Հայութեան համար ամօթ է որ այդ գործը հանգանակութեամբ կատարուի» : Իս սակայն մի եւ նոյն պաշտօնակիցս կը շնչաէ արդարացի կերպով. «Բայց Բասմաջեան հա-րուստ չէ. դրամի պէտքը կայ այդ զնահատելի դործը ղլուխ բերելու համար : Խեղճ հայ հնախոյզը այդ դործը յաջողեցնելու համար գիտէ՞ք ինչ է անում. գիմում է հանգանակութեան : — Ամօթ հայ հարստե-րին : » (Շարժ. 2 Մայիս 1901) :

Այսօր Պարիսի եւ Բեռլինի Ակադէմիաներն հրատարակած են սե-մական զանազան լեզուներով, լատիներէն եւ յունարէն լեզուներով դանուած բոլոր արձանագրութիւնները, մասնաւոր Corpus-ներու մէջ ամփոփած : Իսկ մենք պիտի արթննանք այն ատեն՝ երբ տղէտ չինական-նը բոլորովին քանդէ աւերէ ամէն բան եւ չինութեան նիւթ հայթայթէ իր տնակի համար : Դժբաղդաբար մենք չունինք Ակադէմիա մը, որ կա-րենար պատրաստել հայկական արձանագրութեանց Corpus մը : Արդ ամէն սեռակ ղոհողութիւններու վարժ լինելով՝ չարքաշութեանս եւ զօրաւոր կամքիս վրայ միայն վստահ, առանձինն, բայց միայն հայ ժողովրդի նիւթական աջակցութեանը վրայ յոյսս դրած, ձեռնարկած եմ պատրաս-տութեան ՀԱՅԱՐԱՆԱԿԻ, որ իր մէջ պիտի պարունակէ աշխարհիս ամէն անկիւնը դանուած հայկական արձանագրութիւններն ալ, յար եւ հման եւրոպական Ակադէմիաներու կողմէ հրատարակուած Corpus-ներու :

Այստեղ պարտաւոր եմ շնորհակալիքս յայտնել այն բոլոր պաշտօ-նակիցներու, որոնք նկատելով ձեռնարկած գործիս կարեւորութիւնն եւ ազգօգուտ հանգամանքն՝ իրենց թերթերով արձագանգ հանդիսացան բացած հանգանակութեանս :

Կ. Յ. Բ.

Ուղղելի. — Ներկայ պրակիս մէջ երես 31, տող 9 «հայերէն» բա-ռը պէտք է կարգաւ «գերմաներէն» :